ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 հոկտեմբերի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ուղերձն է հղել հայ ժողովրդին՝ հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունների տարելիցի առիթով:

«Միրելի ժողովուրդ հայոց.

Լրացավ մեկ տարին ցավալի այն իրադարձությունների, որոնք 1999 թ. հոկտեմբերի 27-ին ցնցեցին և վշտով համակեցին համազգային հասարակական մեր կյանքը: Այսօր յուրաքանչյուր հայորդի իր հոգու խորքում մեկ անգամ ևս դատապարտում և մերժում է այն անմարդկային բռնությունը, որ արժեցավ մեր ժողովրդի ութ զավակների՝ պետական-քաղաքական բարձրաստիճան գործիչների կյանք և վրանգեց հայրենի մեր պետության կայունությունը: Ոգեկոչելով ու հարգելով հիշատակը Հայաստանի Հանրապետության զոհված պետական այրերի, որոնց նվիրական երազն էր տեսնել մեր Հայրենիքի զորացումն ու բարօրությունը, մեր ժողովուրդն այսօր հաստատում է օրինահարգ հասարակություն կերտելու իր կամքը և հավատում հայրենի անկախ պետության լուսավոր գալիքի հանդեպ իր վստահությունը:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մենք մեկ անգամ ևս Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում զոհված պետական գործիչների՝ Աժ նախագահ Կարեն Դեմիրճյանի, վարչապետ Վազգեն Սարգսյանի, Յուրի Բախշյանի, Ռուբեն Միրոյանի, Հենրիկ Աբրահամյանի, Արմենակ Արմենակյանի, Միքայել Քոթանյանի, Լևոնարդ Պետրոսյանի հարազատներին և աղոթք բարձրացնում առ Աստված, որ երանավետ Իր բարձունքներում խաղաղություն և լույս պարգևի նրանց հոգիներին: Թող Ամենակարող Տերը զորակից լինի մեզ բոլորիս առ Հայրենիքն ունեցած մեր պարտքի մեջ, որպեսզի մեր բոլորի համատեղ ջանքերով, անկեղծ նվիրումով ու ան-

խարդախ սիրով իրական դառնա զոհվածների լուսեղեն երազը՝ բարեշեն վաղվա օրը մեր Հայրենիքի:

Խունկ և խոնարհում, երկնային օրհնություն հայոց երջանկահիշատակ պետական գործիչների շիրիմներին, անթառամ պսակ նրանց հիշատակին:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

* * *

Կիրակի օրը, հոկտեմբերի 29-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, հավարտ Ս. Պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ հոկտեմբերի 27-ի ոճրագործության նահատակների: Ներկա էին հանգուցյալների ընտանիքների անդամները: Հոգեհանգստյան Պատարագից հետո Վեհարանում Նորին Սրբությունը վերստին իր մխիթարանքի և սփոփանքի օրհնության խոսքը հղեց հանգուցյալների հարազատներին: